

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արարատի համայնքապետարանը 2022թ. նոյեմբերի 23-ին ժամը 11:00-ին հայտարարում է Արարատ համայնքի վարչական տարածքի գ.Ուրցալանջ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի վարձակալության մրցույթ: Հողատարածքը ըստ գործառնական նշանակության հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության արոտավայր , ընդհանուր մակերեսն է 0.113 հա, ծածկագիրը՝ 03-094-0135-0004: Հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին է սահմանվել 10.000 ՀՀ դրամ, նախավճար՝ մեկնարկային գնի 5%-ը, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցույթային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան՝ Արարատի մարզ, Արարատ համայնք, ք. Արարատ, Շահումյան 34 : Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Արարատի քաղաքային համայնքապետարան /հեռ. 060 88 55 55 /

